Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

09 դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Ղազարյան
Ն. Գալոյան

Քարտուղար՝ Լ. Ադամյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2021թ. դեկտեմբերի 9-ին, ժամը 15:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է դեկտեմբերի 10-ին, ժամը 15:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2021թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00:

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

13 դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 12:00

6. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2021թ. դեկտեմբերի 10-ին, ժամը՝ 15:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	ք. Երևան, Ե. Կողբացու 30, հեռ. (010) 53 42 33
2	<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. (010) 52 67 51
3	<<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1, հեռ. (010) 56 52 81

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)*					
					<<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ		<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ		<<ՖԼԵԾ>> ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Բենզին ռեգուլյար	լիտր	1580	774200	566166.67	679400	684666.67	821600	671500	805800

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. Համակարգում <<ՖԼԵԾ>> ՍՊԸ-ի և <<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը աճուրդի ամփոփումից հետո համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ-ն:

11. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

12. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

13. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

14. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Վ. Ղազարյան

_____ Ն. Գալոյան

Քարտուղար՝ _____ Լ. Ադամյան